

զուտին զարկին եւ ոսկի զընծըրով հիւսեցին
 Իբր զձաթանն եւ մէջն ոսկի արծաթ լցին եւ
 փողոցնին փող հնչեցուցեալ եւ տալալին
 25 կանչէին թէ ով գա՞յ՝ լաւ հախ, այլ եւ պար-
 դեւս տամ: Եւ այսպէս ժողովեցան աղբ եւ
 աղինք բազում յոյժ:

Ձայն լուեալ Փափն, եւ նա եւս հրա-
 մայեաց գործողով լինել. եւ իբրեւ ետես
 30 թէ Վէնէտիկուն բազում է եւ առաւել,
 գրեաց զիր առ թագաւորն քրիստոնէից եւ
 առ իշխանս եւ մեծամեծս, այլ եւս Ալամանաց
 կայսրն, զալ հասանել յօգնութիւն (ընդդէմ)
 հպարտացեալ գոռողին. եւ առ հասարակ ա-
 35 մենեքեան առաքէին Փափին օգնութիւն, հա-
 դարք հազարաց եւ բիւրք բիւրուց: Չոր իմա-
 ցեալ իշխանն տուք՝ երկեաւ, զի գիտէր որ
 չկարէր դէմ կալ հզօր թագաւորաց. ապա
 չարն վատ խորհուրդ արարեալ անասուածա-

40 բար ընդդէմ օրինաց առաքեաց առ խոնթբարն
 Տաճկաց եւ սաէ թէ Յարեան ի վերայ իմ
 ամենայն թագաւորք եւ իշխանք եւ չիք ինձ
 այլ հնար, բայց թէ քակեմ ես զուխան եւ
 զդաշինս իմ որ ընդ նոսա, եւ ընդ ձեզ արա-
 45 բից ուխտ եւ սէր. արդ աղաչեմ զքեզ առա-
 քեա ինձ այժմ փութով ձեռ հոգի. եւ ես մա-
 շեցից զնոսա ի սուր, եւ զերկիր նոցա ի
 ձեռս ձեր մատնելով մատնեցից: Իբրեւ գես-
 պանքն հասին ի Ստամպոլ եւ զգիրս տլին,

50 խօնթբարն, վէղերնին եւ ամենայն իշխանքն
 մեծամեծօք հանդերձ ցնծացեալ բերկրեցան
 եւ ձայն խնդութեան եւ ուրախութեան տային.
 Եւ աւետիս տային ասելով, թէ Օրս այս մեծ
 է եւ երեւելի, զի ահա մատնեաց Աստուած
 55 զբրիտանեայս ի ձեռս մեր. կատարեցաւ
 բանն Մէհմէտի, զի ահա առնումք զխզըլ ալ-
 ման. եւ խոյս տվեալ միմիանց խրախոյս
 բարձին եւ գրեցին հրովարտակ ի Պօնայու
 պէկլէրպէկին եւ ի Պէլլըրգատ, ի Սիլիսդրայ
 60 եւ ամենայն Ուռումէլի, Պուլզարք եւ ծովե-
 գերայքն, Սէլէնիկ եւ այլ տեղիս, այլ եւ
 յայնկոյս ի Մաղրապ, ի Մալըր, Ռատօսն մեծ
 եւ ի Կիպրոս եւ որ շուրջ եւ հուպ մերձա-

կայք եւ սահմանակիցք էին Ֆուանկացն, զի
 65 փոյթ ընդ փոյթն ժամանեալ հասցեն ի Վէ-
 նէտիկ, աւելի քան գերկոտասան բիւր. այլ եւ
 առաքեաց նամակ տուքին, թէ Ահա առաքեցի
 ձեզ օգնական երկոտասան բիւր՝ քո զրա-
 մով, ձեժմ վաղվաղակի. եւ ես զկնի գամ
 70 ձեռ զօրօք իմով, արքունի գանձովս իմով.

22 հիւսեցին: — 36 փիւրք փիւրուց: — 39 ան-
 յասուածարար ընդէմ: — 48 դէսպանքն: — 53 աւետիս:

քանզի կամէին տիրել Փոանկաց աշխարհին:
 Բայց Աստուած ոչ յաջողեաց, այլ Աստուած
 ցրուեաց զխորհուրդս ամբարտաւանից եւ
 հեթանոսաց: Քանզի լուաւ թագաւորն Սպա-
 նիու եւ թագաւորն Ֆրանցիու եւ այլ մեծա-
 մեծ իշխանք, թէ յարեաւ ի վրայ քրիստո-
 նէից եօթնադարեան վիշապն եւ Վէնէտիք ով
 է բանալի եւ մուտ Ֆուանկաց երկրին. եւ թէ
 ապստամբեցաւ եւ տուքն. ի խոր խոցեցան.
 Եւ փութով հրեշտակ առաքեցին առ Փափն,
 մեղադրելով նմա թէ այտ ինչ բան եղեւ, որ
 մեծ աղմուկ եւ խռովութիւն եկն աշխարհս
 մեր. կամիք զմեզ մատնել ի ձեռս թշնա-
 մեաց. եւ թէ ոչ հաշտիս ընդ Վէնէտիք, կո-
 րեաւ թագաւորութիւնն մեր եւ եղեւ բաժին
 անօրինաց:

Իսկ Փափն լուեալ զայս լուրս բոթալի-
 անկաւ ի մեծ սուգ, որպէս հովիւ հոգեւոր
 զլջացաւ իբրեւ փոշման եղեալ արածին եւ
 պատերազմին. եւ զրեաց առ նոսա թէ Որ-
 պէս կամիք այնպէս արարէք, միայն թափե-
 ցէք զերկիրս ի ձեռաց այլաղբեաց: Ապա
 Ալամանաց մեծ իշխանն որ սահմանակից էր
 եւ սիրելի Վէնէտիքու տուքին, այլ իշխանօք
 որ բազում աղերսանօք եւ աղաչանօք հաղի-
 կարացին համոզել եւ դարձուցանել ի հաշ-
 տութիւն. եւ առեալ տարան առ Փափն ով
 խոնարհեալ եպագ զաջն. եւ նա օրհնեաց
 զնա եւ զքաղաքն. եւ քահանայից հրաման
 ետ դնալ: Եւ եղև ուրախութիւն մեծ եւ խա-
 զաղութիւն աշխարհն Ֆուանկաց: Իսկ զօրքն
 Տաճկաց որ արաղընթաց վաղէին իբր ի հար-
 սանիս, իբրեւ լուան զհաշտութիւն՝ ամօթա-
 լից յետս դարձան: Փառք Աստուծոյ:

Ձի Վանատիք այնպէս պերճ եւ մալրու-
 է, որ մէկ օրն մալի ուժով կարող է Մի-
 հօզի դնել եւ Շ խատրոյայ ծովն հանել. ամէն
 զատրդաւ ԲՃ ճանկչի դնել արաղեասա-
 խովն. եւ ինքն յումեքէ ոչ երկնչի, զի շուրջ
 զքաղաքաւ ծով է. միայն Ալամանու աշխար-
 հէն սակաւ մի ահ ունի, զի մօտ է, լեռնեղն
 կերեւնայ: Եւ ասին թէ Սա Մարքոյին ժա-
 մուն խաղնին եւ ձէնովու քաղքոց նման
 փարթամ եւ հարուստ չկայ այլ տեղ: Քանզի
 հզօր թագաւորն Սպանիու բազում անգամ
 փոխ առնու ձէնովուն գանձ:

(Շարունակելի:.) Հրատարակեց՝ Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՔԱՋՆ ԼԻՊԱՐԻՏ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ՏԱՂԵՐՈՒ ԵՒ
ՋՐՈՑՑՆԵՐՈՒ ՄԷՋ

Յորտեղ նստին հայ ու սեղան
 ժողովք բազումք եւ շատ իշխան,
 Յիշեն ըզնա սուրբ քահանայք,
 Տէր ողորմի ստեն նրմա:

Պատմական դէմք մըն է Լիպարիտ, Կի-
 լիկիոյ հայկական թագաւորութեան վերջա-
 լոյսի ժամերուն պայծառացած հզօր եւ պա-
 տերազմասէր աւագ մարաջախտ մը, որ իւր
 բաղկի ուժով հայրենի հողին պաշտպանն է
 հանդիսացած, վայելած է հայ ժողովուրդին
 վստահութիւնն եւ համակրանքը, ու ինկած
 է պատուոյ դաշտին վրայ իբրեւ նահատակ
 մը հայրենիքի ազատութեան:

Ժամանակակիցները արձանագրած են իր
 արիական գործերը իրենց տարեգիրներու
 մէջ, բանաստեղծները երգած են անոր հե-
 րոտական մահն եւ ժողովուրդը յաւերժա-
 ցուցած է իր նահատակին յիշատակը զրոյց-
 ներու մէջ:

Հերոսին փառքը ճառագայթած է իր
 քրոջ վրայ, որ հայ ժողովրդական զրոյցին
 մէջ կը ներկայանայ ըմբշամարտուհի մը,
 կաշմբուռն զօրութեամբ:

Մինչեւ այժմ ծանօթ էր Լիպարիտ իբրեւ
 պատմական դէմք Կիլիկիոյ ժամանակագրին
 այն կարճ տողերէն, որոնցմէ օգտուած էր
 Հ. Մ. Չամչեան եւ զորոնք քաղուածարար
 յառաջ բերած էր Հ. Ղ. Ալիշան. իսկ իբրեւ
 ժողովրդական հերոս՝ այն կրկին տաղերէն,
 զորոնք երգած են Յովհաննէս Թլիւրանցի
 եւ Սարգիս Կաֆայեցի:

Բայց հիները այնպէս ալ ուրիշ չեն գրա-
 նուած նկատմամբ հայ հերոսին: Պատահած
 եմ յրնթացս իմ դեղերուձմերուս հին ձե-
 ոագիրներու մէջ նոր նիւթերու, որոնք թէ
 պատմական Լիպարիտի դէմքը կը լուսաւո-
 րեն եւ թէ հայ հերոսին փառքը կը պան-
 ծացնեն: Թէ պատմական յիշատակարաններն
 եւ թէ զրուցախառն պատմութեանքը ար-
 ժանի են ուշադրութեան. վերջիններս կը
 բանան մեր առջեւ նոր էջ մը հայ դիւցազ-
 ներգական գրականութեան:

Այս տեղ իմ ջանքս պիտի ըլլայ ի մի
 հաւաքել Քաջին Լիպարիտ անձին հայոյ
 ծանօթ եւ անծանօթ նիւթերը, պատմական

յիշատակարաններն եւ զրուցախառն պատ-
 մութեանքը, թողլով անոնց պատմական
 վերլուծումը գրութեանս վերջը:

Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՋՆ ԼԻՊԱՐԻՏԻ

Առաջին տեղը պիտի շնորհեմ զրուցա-
 խառն պատմութեանքի մը, զոր գտած եմ նախ-
 կին Լազարեան ձեռագրանի Թ. 140 ձեռա-
 գրին մէջ, թուղթ 129ր—134ա, «Պատմու-
 թիւն քաջին Լիպարիտն է ասացեալ» խո-
 րագրով: Ձեռագիրը կ'ամփոփէ իր մէջ Մով-
 սէս Չուղայեցւոյ ժողովածոյքը, որ վերնա-
 գիր ունի. «Գիրք համարօտ ժողովածու
 վասն ի պատրաստ գոյոյ ի պէտս մտառու-
 թեան եւ տեսողութեան բանասիրաց... հա-
 տաքեալ ի նուաստ Մովսիսէ մեղսամած Ջու-
 զայեցւոյ, ի թուականութեանս Հայոց ՌՃԽԴ
 (1695) ամին». օրինակած է 1762ին տէր Աս-
 տուածատուրի որդի տէր Յովհաննէս քա-
 հանայ «ի վայելումն Գօթայեցի տէր Աւետիս
 վարդապետին»: Որչափ նկատած եմ, պատ-
 մութեանքս կը պահպի Մ. Չուղայեցւոյ ուրիշ՝
 աւելի հնագոյն օրինակներու մէջ. եւ արդէն
 նիւթն ալ անյարմար էր այն ժողովածոյքին
 նկարագրին. հաւանօրէն ուրիշի մը, թերեւս
 Յովհաննէս քահանայի զբէն մուծուած է
 հատուածս ժողովածոյքին մէջ, իբրեւ ԼԲ.
 զլուխ:

Ինչպէս կ'երեւայ, պատմութեան անձա-
 նօթ հեղինակը գրի ստած է ինչ որ լսած է
 անդիւր աւանդութենէ: Թլիւրանցւոյ տաղը
 հաւանօրէն ծանօթ եղած է իրեն. բայց ունի
 ինչ ինչ կէտերու մէջ շեղումներ անկէ. մինչ
 Թլիւրանցին պատմական հերոսը կ'երգէ,
 պատմութեան հեղինակը կը նկրտի հերոսէն
 դիւցազն մը կերտել: Արդեամբք ալ արձակ
 դիւցազնիւրութիւն մը հարկ է տեսնել հօն,
 որ Կիլիկիոյ սիրտը ձեւ եւ կերպարանք ա-
 ռած, գաղթող ժողովրդեան հետ աշխարհէ
 աշխարհ ընթացած, բերնէ բերան պատ-
 մութեան, ի վերջոյ յանձնուած է թղթի:

Պատմութեանս կից կայ ուրիշ պատ-
 մութեանք մը՝ Լիպարիտ քրոջ մասին, որ
 նոյնպէս հետաքրքրական է: Ինձ ծանօթ է
 այս պատմութեանքին մէկ ուրիշ փոփոխակը,
 ուր հայ ըմբշամարտուհին կը ներկայանայ
 Եօթը քաջ եղբայրներու քոյրը:

Քաջ Լիպարիտն էր ի Սասնոյ գաւառէն, որ եկեալ բնակէր ի Կիլիկիէ, ի ժամանակս վերջին թագաւորացն Հայոց՝ ի յարգէ Ռուբինանց Հեթմոյ եւ թորոսի եւ ի նոցին թո-

5 ուանցն :
Եւ էր նա քաջ նման Տրդատայ եւ նման Մուշեղայ : Զոր գային Տաճկաց ազգն ի Մարայ բազում զօրօք ի վերայ Տարսոնի եւ Կիլիկիայ գաւառին . եւ ինքն քաջ Լիպարիտն միայն ելանէր ի դէմ եւ կոտորէր զամենե-

10 սին եւ զիզէր զլաշն որպէս բլուր բլուր : Եւ կայր յեզր կարմնջին առ զօրսն թագաւորին . եւ նստեալ հանդէշին ինքն եւ ձին . եւ կրկին մտանէր ի պատերազմն եւ կոտորէր զնոսս եւ փախուցանէր :

Եւ բազում ժամանակս անսասան եւ անվրէպ պահեաց զթագաւորութիւնս Հայոց : Եւ զզօրսն եւ զթագաւորն (թշնամեաց) ձերբակալ այնէր եւ զզօրսն կոտորէր եւ զզօրսն փախուցանէր եւ հալածէր : Եւ յահէ նորա ոչ իշխէր զալ հեծել՝ ասպատակել զՀայս :

Եւ թագաւորն Հայոց երկեալ ի քաջ Լիպարիտէն, զի մի գուցէ եւ զինքն սպանանէ եւ ինքն թագաւորէ : Այլ քաջ Լիպարիտն հոգով եւ մարմնով ոչ ունէր այնպէս վատ խորհուրդ, այլ միամիտ ի սէրն Քրիստոսի եւ սուրբ հաւատոյ Լուսաւորչին եւ սուրբ Եկեղեցեացն՝ քաջութեամբ կայր արիարար ընդդէմ զօրացն Տաճկաց :
Բայց յետոյ Մանճաք անուն ոմն ի Մարայ հեծելազօր հսկայածեւ եւ քաջ եկաւ ինդրել ի Սուլթանէն, զի եկեալ սպանցէ զքաջ Լիպարիտն : Եւ եկեալ ՄԹ հեծելով եւ բանակ էարկ ի դէմ Սըսու : Եւ թագաւորն Հայոց յայնմ ժամանակին ձենեց զքաջ Լիպարիտն եւ ասէ . Քեզի համար եկեալ են հեծեալս : Եւ նա ելաց եւ ասէ . Իմ ջանս վասն եկեղեցեաց է եւ քրիստոնեայ եղբարց, եւ ոչ վասն թագաւորութեան . է՞ր պատճառես զիս, որ զքո թշնամիքն սատակեցուցեր եմ եւ հալածականս արեր եմ կամաւքն Քրիստոսի մերոյ . զարձեալ կրկին յուսամ ամենափրկիչն Քրիստոսս, որ նոյն ինքն տայ կարողութիւն ծա-

ԽՈՐԱԳԻՐԸ՝ Պատմութիւն քաջ Լիպարիտն է ասացեալ : Գլ. ԼԲ :
9 Կիլիկիայ : — 18 եւ զօրսն զթագաւորն : —
19 զօրսն փ. : — 23 գուցէ : — 30 Մաճար : —
33 ծառայ :

ուային իւրոյ, որպէս ընդդէմ գալ եւ վանել զթշնամի խաչի նորա :

Եւ նոյնժամայն եմուտ յեկեղեցին եւ լալով համբուրեաց զսուրբ սեղանն եւ ասէ . Բարով կացէք, զի թշնամեաց ոչ վախենամ . ապա յիմոցս . թշնամութեամբ խորհուրդ խորհէին ինձ . բայց ես միամտութեամբ դնեմ զանձն իմ ի վերայ քրիստոնէից : Եւ համբուրեաց զեղբայրն իւր զՎասիլ եւ զորդիւն իւր զՅոհաննէս եւ զԿինն իւր Աննայ . եւ բազում ողբով գովեաց եւ ասէ . Ոչ գիտացին զջանս իմ եւ զքաջութիւնս իմ . այլ յորժամ հեռանայ ոսոս ի դրանէ արքունի, շուրջ պատեն գազանք վայրենիք եւ արեան ծարաւիք եւ աւերք ամեն եկեղեցեաց եւ զարդասաց եւ այնչափ արիւնս հեղուն անպարտ քրիստոնէիցն :

Եւ երբ դձին, թամբեց եւ հեծաւ քաջ Լիպարիտն, եւ ըսումքն ի ձեռինն՝ խաղայլ առաջի զօրացն Հայոց թագաւորին . եւ օրհնէր զԱստուած : Եւ ի ձայնէ գոչմանէն արհաւիր լինէին թշնամիք իւր եւ սրտակոտոր որպէս գոչիւն սուրբոյ :

Եւ սովորութիւն էր նմայ՝ երկու, երեք քաջ ձի թամբօք պահէին զհետ նորա . եւ յորժամ յոզնէր ձին ի վաղելոյ եւ ի գնացմանէ՝ զառնայր առ հեծելն եւ իջնայր ձիուն եւ հեծնայր ի միւսն եւ զառնայր պատերազմն : Եւ բազում անգամ ի մէջ պատերազմին անկաւ ձին եւ ինքն հետեւանկ կուռելով ի հետ ձիաւոր եւ ըսումբաւոր զրահաւորացն . եւ կոտորելով ելանէր ի միջոյ ամբոխին եւ երթայր առ զօրսն եւ հեծնայր զմիւսն ձին եւ զառնայր զոչելով որպէս զառիւծ : Եւ մնամ թէ շատք ի յահէ նորա մեռանէին ի վերայ ձիոց . եւ նա զկռփողան կոտորէր՝ որպէս հուր զեղէզն : Եւ որք հարկանէին զնա սրով եւ նիզակաւ եւ նետով, ոչ նայէր յետս, զի ոչինչ համարէր զնոսս եւ զհարուածս նոցա . այնպէս թվէր թէ տանկինակով հարկանէին զինքն : Այլ եւ բազում անգամ հետեւակ մտանէր ի կռիւ ի մէջ ձիաւորաց եւ միայն քարածղութեամբ զարձուցանէր զթշնամիսն . եւ ինքն զառնայր ուրախութեամբ, օրհնելով զԱստուած :

Եւ մի ոմն քաջ՝ Մանճանք անուն՝ որ եկեալ էր ի կռիւ ՄԹ զօրօք . եւ ել քաջ Լիպարիտն զոչելով եւ արհնելով զահեց ար-

70 հօղնէր : — 80 դհուր եղէզն :

նունն Աստուծոյ . եւ գնայր խաղալով ի դէմ զօրացն : Եւ նոքա սասանեցան, երբ տեսին զյաղթող վկայն Քրիստոսի : Եւ մտեալ ի կռիւ եւ հարեալ վանեց եւ կոտորեց զնոսս եւ ըսպան զՄանճակն . եւ դարձաւ յետս եւ կուտեց զլաշն որպէս զբլուր : Եւ ի խօնճիլ երիվարին՝ դարձաւ յետս առ զօրսն Հայոց :

Յայնժամ թագաւորն շարացաւ . էսո զՀայոց հեծելս եւ յետս դարձաւ, էանց զկարմուռնն եւ փլոյց զնա կապանաւն :

Եւ եկեալ քաջ Լիպարիտն եւ ետես զչարութիւնն որ վասն իւր : Եւ ինքն զմահն յանձն էսո վասն Քրիստոսի . եւ դարձաւ յետս . եւ էջ յերիվարէն եւ ընկէց զսուրն իւր ի բաց եւ նստաւ ի մէջ ասպարիսին : Յայնժամ բոլորեցին զնա . եւ ոչ ոք իշխէր որ մերձենայր առ նայ : Եւ այնչափ նետեցին ի հեռաստանէ ըսումք եւ նիզակս եւ զեղարզս ի վերայ նորա, մինչեւ թագեցաւ : Եւ ապա սուր հանեալ եւ խոցոտեցին զնա եւ սպանին :

Եւ սկսան կոտորել զաշխարհն եւ քակել զեկեղեցիսն . եւ սպանին զթագաւորն . եւ գերեցին . եւ սպաննելոցն արանց եւ ի կանանց, որ զթիւն միայն Աստուած զիտէ :

Եւ զգլուխն քաջ Նահատակին տարան ի Մըսըր : Եւ սուլթանն յոյժ ասպաշուեաց, եթէ Բնդէ՞ր ոչ բերէիք զնա կենդանի առ իս, զի կին տայի նմա որ արժէր, եւ թագաւոր առնէի, ընդդէմ թշնամեաց իմոց կեցուցանէի զնա որպէս պարիսպ :

Եւ այնպէս նահատակեցին զքաջն Լիպարիտ եւ աներեցին զաշխարհն եւ տիրեցին սոգն Տաճկաց եւ թագաւորեցին :

ՔՈՅՐՆ ԲԱԶԻՆ ԼԻՊԱՐՏԻՆ՝ ԸՄԲՇԱՄԱՐՏ

Եւ քաջն Լիպարիտն ունէր քոյր մի փախուցեալ ի զիւղ մի, առնակին եղեալ, իրրեւ յիսուն ամաց :

Եւ յայնմ ժամանակին ելեալ փահլուան մի իամայելացի եւ ասէր պարոնին Սըսայ, թէ Բեր ի գաւառէ քումմէ կամ ի զօրաց քոյ ինձի նման, զի գօտէմարտիցուք, թէ ոչ սուր ինձ հարիւր զեկան կարմիր ի աշխարաց քոց :

100 րկոց : — 109 ըսումք :
ԽՈՐԱԳԻՐԸ՝ չունի Զ :
2 ասնայկին եկեալ : — 5 իամայելացի :

Եւ նա ոչ եգիտ այլ բռնամարտիկ որ զգօտին բռնեալ էր տաճկին :

Եկն քոյրն քաջն Լիպարիտն եւ ասէ . Ի՞նչ տայք ինձ եւ ես կռիւմ գիտալուանն : Եւ ասէ Պարոնն . Զի՞նչ ինդրք ունիս նա տամ, եթէ կռիւս զնա : Ասէ կինն . Որչափ բամպակ որ շաղկեմ այն իմ լիցի : Եւ առին յանձն :

Եւ եկեալ փահլուանն՝ ետես զկինն հսկայածեւ եւ երկեաւ . բայց վասն կին լինելոյն արհամարհեաց զնա : Եւ մերկացաւ փահլուանն եւ զգեցաւ զգգկստն իւր . եւ սկսաւ խաղալ, իբր թէ այս առնէր, եւ խընդէր այր մարդ զի մարտիցէ ընդ նայ :

Եւ եկն յառաջ կինն՝ իւր կանացի զգեստիւն . եւ բռնեալ զերկու լծակացն փահլուանին երկու բամբըն եւ վերացուցեալ զնա եւ տարաւ յառաջի պարոնին, իզիր զերեսս փահլուանին ի գետինն եւ զմի ականջն քարշեալ ի բաց նետեց : Եւ ամենեքեան գահի հարան, թէ ուստի՞ է սա կամ ո՞ր ազգէ :

Եւ հրամայեաց թագաւորն տալ նմայ բամբակ որպէս որ կարէ շաղկել : Եւ բարձան զկինն այնչափ, մինչեւ հարիւր լիտր : Եւ նա ստեալ ուրախութեամբ եւ զնայ ի տուն իւր . եւ իբրեւ էրաց զբամպակն, նա ետես որ եղեալ էր ի մէջ բամպակին քարս որ կայր քառասուն լիտր :

Եւ ամենեքեան ապուշ մնացին զօժանգակութիւն կնոջն . ամէն :

Բ . ՅՈՎ.Է. ԹԼԿՈՒՐԱՆՅՈՒՅ ՏԱՂ ԲԱԶԻՆ ԼԻՊԱՐՏԻՆ

Տաղս առաջին անգամ լոյս տեսաւ 1885ին Հ. Ղ. Ալիշանի Սիսուանին մէջ (էջ 226) : Զեռագիրը, ուսկից հանուած է օրինակը, չէ յիշատակուած : Բնագիրը, ինչպէս կը գրէ Նորայր Բիւզանդացի, յիշեալ հրատարակութեան մէջ «Թերի է եւ կամաւ այլայլեալ ի պատճառս թուրքին» : Այս այլայլումները անփոփոխ պահուած են տաղիս յետագայ հրատարակութիւններու մէջ . այսպէս՝ Կ. Կոստանեանց, Յովհ. Թլիւրանցի եւ իւր տաղերը . Թիֆլիս, 1892, էջ 52—56 : Հ. Ղ. Յովհաննեան, Միջնադարեան ազգային տաղաչափութիւն, «Հանդէս Ամսօրեայ», 1896, էջ 115—116 = արտատպ. Վիեննա, 1911, էջ 30—31 . Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վեներիկ 1901, Բ. մաս, § 359 :

20 րսկեցաւ զգգկստն :

Տաղէս ձեռագիր օրինակ ծանօթ չէ ինձ. ունինք առաջին 1—8 եւ 13—16 տողերու համար երկրորդ օրինակ Սարգիս Կաֆայեցւոյ «Հողովդ սուրբ ես եւ ամբիժ» տաղին վերջը, հրատարակուած նախ Հ. Գ. Ալիշանէ՝ Յուլիկը Հայրենեաց Հայոց, Բ., էջ 512 եւ ապա Հայաստանում, § 359բ: Իսկ տող 61—96 գտած եմ էջմիածնի Թ. 515 ձեռագրին մէջ (Թղ. 26 ա, ԺԷ. դար): Յեցած այս օրինակներու վրայ կը փորձենք վերականգնել բնագիրը, իսկ 9—12, 17—60 տողերու մէջ Հ. Ալիշանէ մուծուած կամաւ այլալուծիւնները կ'ուզղենք ենթադրաբար:

Տաղին հեղինակը իր անունը զրոյշած է վերջին տան մէջ՝ Յովհաննէս Թլուրանցի:

Լիպարիտի վսեմ, հայրենասէր եւ տիրասէր ողւոյն վառ նկարագիրը, անոր ընտանեաց անդամներու յականէ յանուանէ յիշատակութիւնը, հերոսին նահատակական մահուան սրտաճմլիկ նկարագրութիւնը, Սիսի աւերումը, ընդհանուր ժողովրդական սուգը առթիւ Լիպարտի եւ իր որդւոյն՝ Սիր Յոհանի նահատակութեան, պատկերներ են կտաւի վրայ առնուած թարմ գոյներով, որոնք կ'ենթադրեն ժամանակակից մը եւ ժամանակի զգածումներուն թարգման մը: Այս պատճառաւ ալ յայտնած էի ժամանակ յառաջ¹ այն տեսութիւնը թէ տաղիս հեղինակը չէ Սոյ Յովհաննէս Թլուրանցի կաթողիկոսը (1495—1535), այլ համանուն աւելի հնագոյն մը, թերեւս Յովհաննէս Թլուրանցի գանձասացը, որուն գանձերը կը տեսնուին արդէն 1370ին եւ յաջորդ տարիներուն զրուած Գանձարաններու մէջ: Այս Գանձասաց Թլուրանցւոյ պէտք է վերագրել ոչ միայն Լիպարտի գեղեցիկ երգը, այլ եւ յանուն Յովհ. Թլուրանցւոյ հասած տաղերու ընտիր շարքերը:

ՏԱՂ ՔԱՅԻ ԼԻՊԱՐՏԻՆ

Է Աստուծոյ անունն օրհնած
որ անբակիրն եւ անվախճան.
Որ ուժ երեւ քաջ Լիպարտին
եւ զօրացոյց զիւր սուրբ ծառայն:

¹ Յաստուծոյ... օրհնեալ S: — 3 որ ետուր ուժ լ. S:

¹ Արեգ ամսագիր, 1923:

Ի սուրբ Սարգիս քաջն ի նրման,
ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,
Քան ըզՄուշեղ այլ խիստ յաղթող
քան ըզՏրդատ Հայոց արքայն:

Յորժամ հեծնուր զիւր ձին վազան,
ի ձեռն առնոյր զրուսմ ճօճան,
Սասանէր ազգըն թուրքմանաց
Դողայր ամէն թուրքմանաստան

Պատերազմին չըկայր խափան
ամէն տարի տանն ու քրոսան.
Ինքն ըզթուրքմանըն հալածէր
արիւն հանէր զէտ գետ Զիհան:

Զերթ քացիով տիկ չարեօք լըցան.
Ժողովք առին 'ւ ի Սիս էկան,
Մանչակ անուն չարեաց մտան,
մօտ ի քաղաքն եկան հասան:

Վաթսուն հազար մարդ միարան,
զըրէհն հազան 'ւ ի ձին հեծան,
Չեռուին առին զըրուսմ ճօճան,
թուր եւ սուպար, ու կանգնեցան:

Վաթսուն հազար թուրքմանք եկան
Չայն ձրղեցին ու կատղեցան.
Հարին ըզփող պատերազմին,
զրուկն ու զնաֆիրն ըզգաւհարկան:

Այն անօրէն չար կենդանիքն
որ են նօքա թուրքմանական,
եւ ի յահէն քաջ Լիպարտին
զինչ զուս. զողան, առաջ չիզան:

Յայնժամ ասէ սուրբ թագաւորն.
«Քաջ Լիպարիտ, մեծ զօրական,
Հեծելըս քեզ համար եկան.
մինչ յայս տեղիս ուր կանգնեցան:

Վաթսուն հազար մարդ կտորեցիր.
ու զՄանչակին զոված տղան.
Ատիր ըզթախտըն Սուլթանայ
բերիր ձիանն ու շատ թուրքման»:

5 զերթ սուրբ S քաջին նրման J: — 7 ըզ
Մուշեղն յաղթող եղեալ S: — 9—12 չունի J:
11 օտրանց? S: — 12 օտարաստան S: — 13 պատ
րազմիկ եկիր հափայն (?) J: — 14 ամեն J ու լ
— 15 մինն S: ըզթուրքմանըն S ըզթուրքման J: — 16
գետեր J. հոս կ'ընդհատի J: իսկ S կը նշանակ
րազմակտեր, յայտնի չէ թէ ձեռագր⁶ը պակասու
է թէ հրատարակիչը տողեր զուրս թողուցած
— 18 'ւ] ու S: — 22 'ւ] ու S: — 23 զրուսմ
— 25 օտրանց S: — 30 օտարական S: — 38
որ S: — 39 թուրքմանց (?) S:

Քաղցրիկ ետուր պատասխանի,
թէ «Ես քաղքիս չարին փոխան.
Բայց չէ պատեհ զրուց առնել
թէպէտ հասաւ ինձ օր մահուան»:

Էջ եւ թամբեաց զիւր ձին վազան.
հազաւ զրէհ 'ւ ի վրայ ճօջան,
ի զլուս եղիր յաղթող վահան.
ի ձեռն էտ զըրուսմ ճօճան:

Երկըրպագեաց սուրբ աթոռոյն,
եւ ծուներ եզիր ամէն խորան.
Փառաւորեաց զերրորդութիւն
գովեաց զիշխանսըն միարան:

Հառչեաց, զորդեակըն համբուրեաց
հանց որ զհեծելն ի լաց եհան:
Ասաց. «Որդեակ իմ Յովհաննէս,
Վասիլ եզրայր իմ սիրական:

Փառօք տիկին զու Մանանայ,
իշխանուհի արեւելման.
Հայեաց պատկերս ի մանկութեան,
որ տի մանուս ի հող տապան»:

Քաջ Լիպարիտ ասաց ցարքայն.
«Հայոց արքայ ազնուական
Հաստատ 'ւ ամուր պահէ զկարմունճն.
որ ես մանուս ի մէջն ու դամ»:

Յիշեաց զՔրիստոս ահեղաձայն,
կտրեց 'ւ անցաւ առիւծ նրման.
Զհեծելն արար փախրտտական
'ւ ի հետ եղիր ընծանրման

Լաշկարն արար զիզան զիզան
հանց որ արիւն գետեր եկան:
Նա թագաւորըն չարացաւ,
զհեծելն առաւ ու հա՞ դարձաւ.

Թուրքաց հեծելն առաջ եկան,
զկարմունճն առին ու կանկնեցան:
Երբ Լիպարիտն ի յետ դարձաւ,
նա չար հեծելն ի դէմ եկան:

Ըռուսմը զըրին ամէն զիհացն,
չատ խոցեցին զյաղթող վրկայն.
Հայէր ողորմ յաջ եւ ի ձախ
զոչ ոք զտաւ իւր օգնական:

46 ի վերայ S: — 47 անխմաստ է «վահան»,
պէտք է ենթադրել «օտարաւոր»:
— 48 զրուսմ S:
— 61 հոս կը սխտ էջմ. 515. Լիպարիտն... ար-
քայն E: — 62 թագաւոր S: — 63 ու S- չունի E-
զե կ. E: — 66 կտորեաց վանցաւ E: — 68 հետն
երթայր: — 69 լաշկն արաւ S: — 72 առին... դար-
ձան S «ու» չունին SE: — 74 զկարմունճն E: —
77 զիմաց S: — 78 զաղթող E: — 78 աջ E: —
79 չե դաւաւ E:

Գաղանաղէմ անօրէնին
սրբոյն արեան ծարաւէին.
Զիւր սուրբ մարմինն ի հօն թողին
զգլուխն առին ի հետ տարին:

Երբ որ հեծելն ի յետ դնաց,
ապա Սիսցիքն ի դուրս եկան.
Կըրկին առին 'ւ ի Սիս մրտան.
քաղքին կրրակ դարկին 'ւ երան:

Շատ դարդասնին աւեր ամին.
'ւ եկեղեցիքըն զանազան.
Էրէցկնին գերի տարան
սարկաւազունքըն միարան:

Ճառագայթեց լոյսն ի վըրան
ի սուրբ մարմնոյն ի հանգրստեան:
Քաջ Լիպարիտն ու Սիր Յոհան
քրիստոնէից համար մեռան:

Յոր տեղ նրստին հաց ու սեղան
Ժողովք բազում եւ շատ իշխան,
Յիշեն ըզնա սուրբ քահանայքն,
Տէր ողորմի ասեն նրմա.

Ոչվ Յովհաննէս Թուրքմանցին
Կարճ եւ ողորմ ասաց զայս բանս.
Դուք յիշեցէք զինքն հանապազ,
Յառակ ասէք ի մի բերան:

Հ. Ն. ԱԿՆԵԱՆ



ԹՈՅԹ-ԲՈՒՆԱՅԻՆ ԳԵՒԵԼՈՒՆԵՐԸ
ՈՒՂԵՒՈՐԱԿԵՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.

Մեր գասական պատմագրութեան մէջ
զբեթէ եղական է Արծրունեաց Արքայատոհմի
պատմիչ Թովմա վարդապետի նկարա-
գրութիւնը՝ Սոյթ-Բոնաչէն գաւառների աշ-
խարհագրական գիրքի եւ բնակիչների ա-

81 անօրէնին E անօրինին S: — 82 ծարաւէին
սուրբ օրէնին, ծարաւ էին սուրբ յարեան F: —
83 մարմին E: — 84 տարան E: — 85 հեծեալքն...
դնացին S: — 86 'ւ ապա Սրացիքն S: — 87 երան S:
90 վեկեղեցիքն E յեկեղեցեացն S: — 91 երկցկա-
նայք S: — 93 լոյս ճ. վրան E: — 94 ի] եւ S չունի
F: — 95 Յոհան E ուսիր Յոհան S: — 97 ի սե-
ղան S: — 97—104 չունի E: — 100 Տէր] տան S:
— 101 Յովանէս S: